



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<ՈԵ>> օգոստոսի ----- 2011թ.

N 272

ք. Արմավիր

<<ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԻՎԱՆԴԱՆՈՅ>> ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 35-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 17-ի N 874-Ա որոշումը

որոշում եմ՝

1. <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը՝ գույք ձեռք բերելու հաշվին, ավելացնել 28.934000 /քսանութ միլիոն ինը հարյուր երեսունչորս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամով՝ 5787 հատ լրացուցիչ սովորական անվանական բաժնետոմսեր /5000 դրամ անվանական արժեքով/ տեղաբաշխելու միջոցով:
2. Հաստատել <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ կանոնադրական կապիտալը՝ 213.964.000 Հայաստանի Հանրապետության դրամ, հասարակ /սովորական/ անվանական բաժնետոմսերի քանակը՝ 42793 /քառասուններկու հազար յոթ հարյուր իննսուներեք/ մեկ բաժնետոմսի անվանական արժեքը՝ 5000 Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հանձնարարել <<Վաղարշապատի հիվանդանոց>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության Վաղարշապատի տարածքային բաժնում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ